

ւոր Համալսարանէ վկայուած բժիշկի մը անձնական երկարամեայ փորձառութիւններուն:

« Բժշկական » բուռելու առաւելութիւններով օժտուած, Հեղինակին ալ յոյժ պատուաբեր, անդրանիկ աշխատութիւնն էր սա, զոր Հայ մամուլը կը ծնէր, զբար է այն, բայց պարզ ու մեկին ոճով շարադրուած. կը պատուիրէ այլևայլ հիւանդութիւններու յարմար զանազան դեղեր. կը ներառորէ զանոնք իրենց չափերով ու կը զեպայացնէ ղեղադոստիմ ձեւին տակ. վերջը կը դնէ երկրորդ Հատոր մը ևս, որուն մէջ կ'ամփոփէ պատուիրած ղեղերուն Հատիներէ — Հայ բառարանը, բաւականի լաւ բացատրութիւններով:

* * *

Քաւանթարեանի Բժշկարանին նման գործ մ'էր, զոր 1806ին Վենետիկի Վանքը կը հրատարակէր. այն է՝ Ողուլլուխեան Յովակիմ բժիշկին « ՆԻԻԹ ԲՈՇԿԱԿԱՆ » անուն համառօտ մէկ երկը աշխարհարար, որ ուրիշ բան չէր, բայց եթէ խառն գրութիւն մը, խտացում առողջապահիկ պատուէրներու ու յանձնարարութիւններու, ինչպէս նաև սննդարար համարուած կարգ մը նիւթերու, և հիւանդութիւններու յատուկ ղեղորէներու, կից՝ ունենալով և մէկ փոքրիկ բառարան:

Օղուլլուխեանի գործէն վեց տարի վերջ՝ 1814ին, կալկաթայի մէջ կը տպագրուի « ԳԻՒՏ ԿՈՎԱՅԻՆ ՊԻՍԱԿԻ » անուն կարևոր հատորը, որ Միպիկ հիւանդութեան դէմ հնարուած ճէներբեան պատուաստին պատմութիւնն էր Անգլիերէնէ թարգմանուած:

Եւ այս Հրատարակութեան կը յաջորդէ ահա, ուրիշ տարի յետոյ, Բէստէնի

երկհատոր աշխատութիւնը, պատրաստուած բոլորովին տարբեր ոճով, և իւր նախընթացներէն ալ գերազանցապէս շահեկան, մասնաւնդ բժշկական, զոր պիտի նկատեմ միշտ ո՛չ միայն Հայ Բժշկական Մատենագրութեան մէկ ճոխ հարստութիւնը՝ թէև հարիւր տարիներով ծերացած, այլ և՛ Հայ մամուլին մինչև 1822 ապրած երեք դարերու տաժանակիր կեանքին ու կրած դառնակսկիծ երկունքին ալ եզական ու անմոռ մէկ արգասիքը:

Մ'վ էր ստոր Հեղինակը. — Աւանասիկ անոր կեանքին զիտաւոր զիծերը ճարուած իւր ընդարձակ կենսագրութենէն, զոր հրատարակած եմ 1898ին և 1901ին Վիեննական Միտիթարեան Միարանութեան Հանդես Ամսօրեային մ'ջ:

(Շարունակելի)

ՏՅԵՑ. ՎԱՆ. Յ. ԹՈՒՐՈՒՄԵԱՆ



ՀԵՍՏՈՍՍԱԿԱՆ

ԽՈՐԱՆ (ABSIDE)



Խորան բառս մեր մէջ շատ նշանակութիւններ ունի, ինչպէս՝ բնակարան, կամար, վրան, տաղաւար, գմբեթաձև ծածք. կ'ըսուի խորան արջունի, խորան երկնից, խորան վկայութեան, խորան Աստուծոյ, որ է սեղան սրբութեան: Բայց համապատասխանող abside բառին, կը նշանակէ այն կոնքեղաձև շինութիւնը, որ եկեղեցոյ բնմին յետակողմը կը կազմէ: Արդէն Քրիստոս սերէն բառս abside, որ յոյն ἀψις—αψιδος բառէն կազմուած է, գործածուած է նշաւ

1. ՏԵՐՔՈՒՄԵԱՆ ՔԱՆԱԹՈՒՐԵԱՆ ՊԵՏՐՈՍ ԲՈՇԿԻՄՈՎ վերնագրով աշխատութիւն հրատարակուած Հանգես Ամսօրեայի մէջ. տարի 1891. յունուար:

2. ՏԵՆ « ՅՈՎԱԿԻՄ ԲՈՇԿ ՕՂՈՒՂՈՒԽԵԱՆ » կենսագրութիւնս, հրատարակուած Հանգես Ամսօրեայի մէջ տարի 1896 Ապրիլ, Մայիս:

3. 1814—1822ի միջև հրատարակուած են Բժշկութեան վերաբերեալ երկու փոքրիկ աշխատութիւններ ալ, որոնց

մին գտնուած է 1815ին և 1818ին Վենետիկ տպուած «ՏԵՄԱՐԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ» ին մէջ՝ բժշկականօրէն և մարդակազմութեան վերնագրերով, և միւսը՝ 1820ին Վենետիկ հրատարակուած Հ. Ղ. Ինժեճեանի «ՄԱՍԿԱ ԲՈՒՅԱՆԴԵԱՆ» անուն հատորին վերջը, «ԽՐԵՏ ԵՒ ԳԻՏԵԼԻՔ ՎԱՍԵ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՆՈՂ ԺԱՆՏԵԱՅԻՑ» վերնագրով:

նակելու գմբեթաւոր ատեանն խորհրդոց, որ մեր մէջն է համապատասխան խորան բարխա: Այս տեսակէտով, Քաջունի յոգնարդին վարդապետ, իր Բառգիրքը Արուեստից և Գիտութեանց մէջ կ'ըսէ. «Խորան սրբութեան է «Այն մասն նախին եկեղեցեաց» որ բաժանի վանդակօր ի խմբարանաց (nefs) և յորում է առաջ խորանն և դռան և յօրինեալ է կիսաբոլոր իմն ձևով և կամարակապ»: Պապիսա կ'ըսէ Absida est hemispherium = խորանն է կիսաբոլոր»: Տիտան այս հին կոչումը մէջ կը բերէ exedra est absida, sive volta = ժողովարանն է խորան, այսինքն է կամար: կը գտնենք Ս. Թէոդոտոսի Գաղատացոյ վկայարանութեան մէջ († 303) որ սուրբս կ'երթայ Նախահարց եկեղեցին, բայց կը տեսնէ որ հեթանոսը դռուը որմնափակեր են, այն ատեն արտաբուստ ծուխը կը դնէ կոնքածկին առջև (concha), ուր խորանն էր:

Հալածանաց դարուն մէջ՝ բնական է բրիտանոնէական եկեղեցին չունէր հրաշակերտ տաճարներ, ինչ որ ապագայ դարերուն մէջ երկնավառ և երկնատննչ հանճարներ ստեղծեցին, այլ գետնադամբաններու և գետնայարկ ծածուկ բնակարաններու մէջ. ընդհանրապէս երկայնածակ սրահներ էին, որոնց խորը՝ խորշիկ մը կըլորածակ կամարածակով կ'աւարտէր, ուր դրուած էր սեղան մը և հոն կը պատարագուէր Անմահ Գառին անարիւն զոհը՝ սուրբ Պատարագը: Երբ կոստանդիանոսի բրիտանոնէական ազատութեան հրովարտակն ելաւ՝ գետնադամբանաց անշուք սրահներու փոխանակեց Մեծին կոստանդիանոսի և իր Մօր Հեղինէի գեղեցկակերտ և ընդարձակ եկեղեցիները, և հին հեթանոսական փառայեղ տաճարները բարեփոխուելով եղան ճշմարիտ Աստուծոյն տաճարներ, որոնց շատերն ունէին կիսաբոլոր գմբեթայարկ մասերը, որոնք նուիրուեցան Սրբութեան տաճարին խորաններուն համար:

Արքունի ապարաններ ևս, ինչպէս ընդարձակ և հոյակապ դահլիճներ, ուր

դատաւորներ կը ժողվէին դատ վարելու համար, որոնք զարդարուած էին սրենբուով, և բաժնուած էին այլևայլ խմբարաններու, որ և կը կոչուէին Բապիլիք = արքունի, ասոնք ևս փոխանակուեցան և եղան տաճարներ և իրենց բաղիլիք անունն ունեցաւ Մայր եկեղեցի, աթոռանիստ եկեղեցի, կաթողիկէ նշանակութիւնները: Ասոնց խմբարաններէն մին, որ չունէր ոչ այնչափ խոր ընդարձակութիւն մը և կիսաբոլորակով կ'աւարտէր և ուր առաջին դատաւորին և իր ընթերակայից սեղին էր, յարմարուեցաւ վայր եկեղեցոյ խորանին. հոս էր ուր դրուեցաւ եպիսկոպոսական աթոռ և ժառանգաւորաց նստաւան, և որոնց հանդէպն էր սուրբ սեղան պատարագին, և փաստարաններու վայրը եղաւ դաս դարաց: Յետոյ ժամանակով այս սեղանին աւելի բարձրութիւն մը սրուեցաւ, որուն համար կը գտնենք Թուրքի Ս. Մարթին եկեղեցոյ խորանին վրայ դրուեալ երկնից կոչումը՝ QVAM METVENDVS EST LOCVS ISTE VERE TEMPLVM DEI EST ET PORTA COELI). — Ճարտարապետը կը կոչեն այսպիսի բոլորակածները՝ կոնքեղածակ, որովհետեւ ծովային կոնքեղի պատեանի ձևն էր, որ իրենց գաղափարական եղբը է. զայս ևս կ'ըսէ Լուկեացն Պողոս (359):

Գետնադամբաններու մէջ ինչպէս Գալիստեան գերեզմանին մտից վրայ կայ տաճարիկ մը, որուն խորանայարկը ունի խորը կիսաբոլորակ մը և երկու կողմերն ալ, ուրիշ երկու կիսաբոլորակներ: Այս ձևը յոյեց կը կոչեն *trigona* և լատինը *trigona*, որ է եռախորանն: Ս. Պաւլինոս Նիւլայի մէջ այս ձևով կառուցած եկեղեցոյն նկարագիրը կ'ընէ: Բեթղեմէէ մէջ կար կոստանդիանոսի շինած եկեղեցին, և աւելի հոյակապն է Ս. Գերեզմանի վրայ իրեն կառուցածը: Սոյն խորանաց նմանութիւնը կը գտնենք Կարգեղոսի և Ասորիքի մէջ. կը գտնենք բացի երեք կիսաբոլոր խորաններէս՝ բազմաբոլորակ խորաններով եկեղեցիներ ալ, ինչպէս

թուրի մայր եկեղեցին և այլք, որոնք դարուց դասաւարտութեամբ և տեղեաց անուններով կը նշանակէ Հ. ԼԵՐԼԷՐ Քրիստոնէական Հնախօսական Բառարանին մէջ (երես 196), հրաւիրելով մեր ընթերցասէր հնագէտները հոն որոնելու ևս մեր Անույ հազար մէկ եկեղեցեաց ճարտարապետութեան պատկերները: Կնիք նիւթոյս ըլլայ յիշա-

տակութիւն մեր հին նախնաց կառուցած եկեղեցեաց եռախորաններն մեր պաշտելի Բնաշխարհին մէջ, որուն նկարագրութիւններէն աւելի աւերակաց նկարներն ունինք Տեղագրութեան մէջ, որոնք ճարտարապետաց համար ուսումնասիրելու թանկագին բովեր են:

Ռ. Կ.

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Գ Ի Բ Տ Ա Ն Դ Է Ի

ՀՌՈՎՄԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. ԽԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՑՆ ՈՐՄԱՆԿԱՐԻՆ ՄԷՋ

(Նախ տես Բզմ. 1922 էջ 142)

Որմանկարին կողորոն նկատմամբ կը դիտենք որ հոն տեսարանը տեղի կ'ունենայ երկու յատակի վրայ. առաջնոյն մէջ, ինչպէս առաջ ըսինք, պատկերներն են Ս. Հեղինէի և Ս. Մակարի, որ ներկայ կը գտնուին մեռած պատանւոյն հրաշքին: Երկրորդ յատակին վրայ կը սկսին միջանկեալ դէպքերն Տանդէի գալստեան ի Հոռոմ. և աւելի աջ կողմը Խաչվերացի, որուն մէջ մեր արհեստագէտն հանճարեղ գիտով մը, որ և յատուկ է քաջհամուտ արուեստագէտներու, մեզի կը պատկերացնէ այն դէպքը որ տեղի ունեցաւ իսկապէս Հերակլէտ կայսեր ժամանակ և և իբր թէ իր ժամանակն հանդիպած ըլլար, և այսպէս կը ծածկէ ժամանակագրական սխալի քօղին տակ ուրիշ դէպք մը՝ այն է խաչին նշանը, որ նոյն ատեն կը հրատարակուէր և կը փառաւորուէր գերազանցօրէն քաղաքական նպատակով:

Նկարիչն իր այս գաղափարը ծածկելու համար ճարտարութեամբ յարմարացրեց է բազմաթիւ միջնադէպեր՝ որոնք մէջ կը ներկայանան անձեր, որ մինչև ցայսօր դիտողութեան չեն առնուած. բայց միտ դնելով կը ցուցնէ մեզի և այլ դէպքեր, որոնց վրայ ակնարկութիւն մը ըրինք, և են մեծ Յօբելեանին տարին, Տանդէի ներկայութիւնն ի Հոռոմ, կուսակցութիւններն Սպիտակներուն և Սեբաստիոն, ներկայութիւնն Վոնիփակիոս Ը.ի և միջնորդութիւնն Վալուայի: Արուեստագէտն տեսարանը կը բանայ բարեպաշտ կանանց խումբով մը որ շարուած են նկարին երկրորդ յատակին վրայ, և կը ներկայա-

ցրեն ուխտաւոր բարեպաշտները՝ որ մեծ յորելեանին կը վազեն և Տանդէն ալ անոնց մէջ է՝: Դէմքը խիտ և մտածկոտ է, աչքերը խորին քիթը արծուեռունգն, զլուխը ծածկուած պատմունանով և դոյզն ինչ առ ի թեք և ասիկայ կը տեսնուի կոնշ մը պատկերին ետև և այս կինը բազկացք մէջ կը կրէ պոստիկ տղայ մը:

Բարձրաւանդակին վրայ՝ որ կը ծառայէ իբր հանգստատեղի խումբին՝ կը տեսնուին գծագրեալ երկու շինուածներ իբր մայր եկեղեցի, որ կըընան լաւ ներկայացնել խորհրդաբար Ս. Պետրոսի և Ս. Պօղոսի մայր եկեղեցիները:

Ով որ կը ճանչնայ Տանդէի դէմքը ըստ ձիողդոյի պատկերին, պիտի չտարակուսի բնաւ մեր որմանկարին մէջ տեսնել անոր նմանութիւնը, և ինչպէս կանխեն նշանակեցինք՝ Տանդէի ներկայութիւնը նոյն տեղը և պատկերին այլաբանական իմաստը ոչ միայն կը հաստատեն որ բանաստեղծը մեծ յորելեանին տարին Հոռոմ կը գրուեսուէր, և միանգամայն որմանկարին հեղինակը թերևս զինքը տեսած է անձամբ ի Հոռոմ, կամ վերջապէս իրեն վրայ տեղեկութիւն տաացած է կամ ժամանակակիցներէն կամ դոյզն ինչ ժամանակի դէպքին հոսքը եկողներէն:

Դիտել կու տանք որ յորելեանի ատեն դեսպաններուն ներկայութեամբ որ երկրորդ յա-

1. Աստ. կատարեցողութեան մեկնիչները կրնորու և ապաշխարող Հոգիներու նման խումբ մը կը գտնուանեն Լուսնոյ մէջ՝ որ կը խորհրդանշէ Քառասներ: